

ԶԱՐՄԱՅՐ

Ե Ի

Շ Ո Ի Շ Ա Ն

Ա.

Հայաստանի արեւմտեան ծայրերու
Բանակ մ' է տան հազար կանգնել քաջերու,
Աչք եւ զէնքեր կը փայլելին բոցավառ
Յարեգական ճառագայթից նորավառ:

Արդեօք բանակ է գազանաց խուժադուժ
Որ գան հայոց վերայ զիւրեանց կը շուռն ուժ.
Թէ՛ զհայաստանն արդէն արեամբ հեղեղած,
Ճոխ աւարօք դառնան, վրէժ կը շտացած:

— Ոչ. եռանդուն սոցա աչքեր չըցօլար
Յոխ թըշնամի, եւ ձեռքերնին չիք աւար.
Դրօշն որ իրենց գըլխուն սըփռէ հովանի՝
Է վիշապն արփիաթեւ հայաստանի:

Բ.

Քաջերուն գլուխ անցել էր յառաջ
Վրսեմ՝ հասակաւ դիւցազանց մէկ քաջ,
Որ ըզտիգազէն ձեռն երկընցուցած՝
Փառաց նոր ճամբայ ցուցանէր քաջաց :

Յաջիպարանոց էր ելած նրժոյգ,
Հեծեալն եւ հեծող յխորտ համազոյգ .
Կարծես մին առ միւս կուտային խրախոյս
Վազել իմրտանդ եւ փառաց իւրոյս :

Գլխոյն արծուաթեւ ոսկի սաղաւարտ
Շողշողայր նորա յաներկիւղ ճակատ՝
Յոր սահէր կընծիւ տըխրութեան թեթեւ
Ձերդ լըճին յերես՝ ագռաւի մութ թեւ :

Եւ բիւն որ կըրակ թափէր ինայեաց՝
Երբեմն ըսքօղէր իկաթիլ մի թաց,
Ինչպէս յամառուան ամպեր վազվազուկ
Ծածկի արեւուն ճառագայթ կարմրուկ :

Կեցաւ, մէյմըն ալ նայեցաւ իվեր
Խառանակիր Մասեաց վեհ սարեր,
Ու սըրտէն թըռաւ մի բոց հառաչմունք,
Ինչպէս իհրաբուխ լեռնէ կայծակունք : —

Ո՛վ էր այն կըտրիճ, ու ինչո՞ւ արդեօք
Սըրտէն արձակէր զայն շունչ հրաբորբոք .
Ինչո՞ւ ճակատին վերայի ըստուեր,
Աչքերէն ինչո՞ւ արցունք կըսահէր :

Նա Հայաստանեայց էր Զարմայր իշխան,
Որ իւր քաջագունդ զօրօքն հայկական
Ըզգրօշ եւ ըզփառս Հայոց վեր առեր
Եւ իհայրենեացն էր սահման իջեր :

Բայց ինչպէս ծիծառ ձրմռան հասնելուն
Կըթողվէ ձագեր որ երթայ տաքուն,
Բիւն ու դողդոջուն կըզարձընէ թեւ
Բոյնին իւր վերջին տալ տըխուր բարեւ :

Այսպէս եւ այն քաջ՝ գընդին հետ մէկտեղ
Անցեր Հայաստանն երբ հասեր այն տեղ
Որ գէմն՝ օտար դաշաք, ետին՝ հայրենիք,
Ու հայրենեաց հետ՝ սրբոյն սիրելիք:

Կարծես իւր ամէն նոր քայլ առնելուն
Սրբառուչ ըզձայն կրլըսէր նոցուն.
« Զարմայր, սէր կերթաս, սէր քաջօք այսքան,
« Ինչո՞ւ, եւ որո՞ւ թողուս Հայաստան . . . »:

Կեցաւ նա, եւ զիւրն ըզլանջ անվեհեր
Որ այն առաջին անգամու տրոփէր՝
Աջովն իւր ահեղ ոյժ տըլաւ ճընշեց,
Ու աչքին արցունք սրլաքաւ ջրնջեց:

Մէյմ՝ ալ սիրելեաց բողոք ցաւագին
Հասաւ նորանոր յականջըս քաջին,
« Զարմայր, սէր կերթաս, որո՞ւ զՀայաստան,
« Որո՞ւ ըզքո հարսըն թողուս Շուշան »: —

Դ.

— « Զհարսն իմ Շուշան՝ թողում յԱստուած . . . »

Գոչեց յանկարծ սիրան այլայլած.

« Եւ զՀայաստան թողում Հայոց,

« Թողում բաղկացն եւ հո՞ւր ոգւոց.

« Իսկ ես երթամ ուր իբարձանց

« Վարեն ըստուերք զիս գիւցազանց,

« Երթամ իմրէժ արգարութեան

« Որ ինձ քաշել սուր ետ հրաման,

« Երթամ գրօշիւք մեր աննըկուն

« ԸզՀայութեան տանել զանուն,

« Եւ բարձրաճեմ յաչս աշխարհի

« Կանգնել ըզմեր փառս հայրենի.

« Երթամ իմեր զինուց շրւինդ

« Հայոց լեզուին հանել տալ թինդ.

« Ի՛նչ օտար երկնից ըզմեր անուանս

« Սովրեցընել եւ ըզպարճանս:

« Երթամ իքէն սհ, ես երթամ,
 « Բայց մեծափառ եւս այլ դառնամ,
 « Որ պըսակաց յիմ իդափնիք
 « Պատեմ ճակատդ, ով Հայրենիք:

« Հարսն իմ անուշ, քեզմէ կերթամ,
 « Մի լար, փութով գիրկըդ դառնամ.
 « Ու երբ ելնես բացեալ ինձ ծոց՝
 « Գըտնես անշէջ Զարմայրիդ բոց . . .

« Բարեաւ կացէք, ով Հայաստան,
 « Բարեաւ մընա, հարսն իմ Շուշան.
 « Դառնամ, դառնամ նախ քան տարին,
 « Թէ ոչ դարձայ՝ ելայ յերկին . . .

« Բարեաւ կացէք լերինք Հայոց,
 « Հովիտք եւ դաշտք իմ ծաղկածոց.
 « Երասխ, Եփրատ, բարեաւ կացէք,
 « Դրախտին Հայոց միշտ ջուր տըւէք:

« Բարեաւ մնացէք, ով իմ նախնեաց
 « Շիրիմք՝ ոսկերք ձեր կենսազգեաց,
 « Եւ դքաջութիւն ոգւով ձեր սէգ
 « Իսիրտ որդւոյս ձեր թափեցէք:

« Բարեաւ մընա, իմ Հայաստան.
 « Բարեաւ մընա, քաղցր իմ Շուշան.
 «
 « »

Դ.

Բայց քաջին սըրտէն յայս անուն վերջին
 Հառաչք եւ արցունք ըզձայն խրդեցին,
 Ու ձիոց իդափր ոտին անհամբեր,
 Փռչին ամպի պէս գիզելով իվեր,
 Ծածկեց այն գիւցազն իւր քաջերուն հետ,
 Մինչեւ հեռացաւ բանակն հետ ըզհետ.
 Եւ դեռ լեռն ու ձոր հընչէր Հայոց ձայն,
 « Բարեւ քեզ՝ բարեւ, մայր մեր Հայաստան . . . »



Հայկեր

Այն վերջին անգամն ըզվերջին ողջոյն
Հայաստան լրսեց իրեն քաջերոյն,
Որոց քիչ գալով դաշտերն հայրենեաց՝
Յասպարէզ բազկի եւ սրբոյն իւրեանց :

Կերթային ծարաւք փառաց քան արեան,
Կերթային անվախ յօտարին սաՀման,
Որ եւ զօտարին ժողովեն պըսակ
Եւ իւրեանց անմահ թողուն յիշատակ :

Այո՛, պըսակաց ընկալան հունձքեր,
Ո՛հ, բայց եւ ըզմահ այն օտար դաշտեր .
Եւ իգամնիգեայս իւրեանց ճակատին՝
Աւաղ, հայրենիք խընդաւ չըկըրցին :

Օտար երկնից տակ նոքա քաջացան,
Օտար երկնից տակ հալեցան՝ ընկան,
Ու խեղճ Հայաստան տանն հազար որդւոց
Եւ ոչ զոսկըրներ ժողովեց իծոց :

Իսկ օտարն՝ որոյ օգտին եւ յօճան
Զէնք ու կեանք տըւին այն բիւրք հայկական,
Օտարն, ոչ միայն չեղաւ շնորհակալ,
Այլ եւ ոչ անուանքն է նոցին պահեալ :

Այն ահեղ կըռուին՝ ամէն քաջ իշխան
Ունեցաւ իրեն երգիչ՝ գովաբան,
Ահ, Զարմայր միայն եւ տանն հազարեակ
Զունեցան եւ ոչ մի փոքր յիշատակ . . . :

Ո՛վ գիտցաւ թէ յայն բիւր ազգաց ժողով
Որ տարան իւրեանց զէնքեր Տրոյոյ քով,
Ասպարէզ իջան եւ Հայք տանն հազար
Ու զարմանք տըւին առ բոլոր աշխարհ :

Ո՛վ գիտաց երբէք թէ Հեկտորին հետ
Կայր քաջ քան զէաս Աքիլլեայ հանդէտ՝
Որ բիւր յոյն քաջաց արեւ խաւարեց
Եւ յուղարկաւոր իւր շիրիմ՝ նետեց :

Ո՛չ, զայն ոչ յիշեաց որ եւ կամ գիտցաւ,
եւ ո՛չ որ յանուն Զարմայրի լացաւ.
Ոչ որ Հայ բիւրուց ոսկերաց վերայ
Բուռ մը հող ցանեց՝ գլխաւով նոցայ . . . :

Հայեր, երբ պիտի երբ պիտի սովբիք՝
Որ ձեր շունչ միայն հայրենեաց պարտիք . . .
Իսկ դուք աշխատիք խիստ օտարիդ՝
Օտարն՝ ոչ տայ քան մ՝ ալ գերեզմանիդ . . . :

Ե.

Սակայն անցան օրեր, անցան ամիսներ,
Լրցաւ տարին զոր էր Զարմայր խոտոացեր.
Եւ թագուհին Հայոց ձիւնեանն Շուշան
Վազեց գրկել Զարմայր ըզքաջ իւր փեսան:

Հագել էր նա ոսկեճամուկ ծիրանի,
Դրլուին առած թագ եւ շրջարշ վարդենի.
Աչքեր կապոյտ վառէր սիրով եւ յուսով,
Այն օր իւր սէր գառնայր պիտի իրեն քով:

Կեցաւ այն տեղ ուր ըզբարեւըն վերջին
Տըւեր Զարմայր ու ծածկեցաւ իրաջին.
Սիրան իկարօտ եւ կէս յերկիւղ ծրփծրփէր,
Քամիի մէջ ինչպէս վարդին տերեւներ:

Յանկարծ հեռուէն ահանջն հասաւ դրղրդիւն,
« Սէրս է ասաց, այս իւր քայլիցն է տրոփիւն ».
Ու գեղեցիկ դէմք դեռահաս այն հարսին
Իբր արշալոյս ծիրանափայլ շողացին:

Սէր իրեն թեւ տըւաւ, փութաց ընդ առաջ,
Բացաւ թեւեր որ սիրելին գրկէ քաջ.
Եւ ըզճակատ նորա՝ այրած արեւէ՝
Կապոյտ աչքին իւր ցօղերով զովացնէ:

Բայց յանկարծ ետ ետ քաշուեցաւ դալկահար.
Աւաղ, առջեւն էր ոչ փեսայն իւր Զարմայր,
Այլ էր Վրստամ՝ Զարմայրայ քաջ զինակիր,
Որ գող իգող գայր աչք խոնարհ իյերկիր:

«Վրտում, դռչեց հարս Զարմայրի շրնչասպառ,
«Ո՛ւր է Զարմայր, ո՛ւր է փեսայն իմ Զարմայր...»
— Զարմայր — ասաց հեծեծելով պատանին,
Ո՛վ թագուհի, սղջ լեր... Զարմայր է... յերկին: —

Այն որ լրսեց խեղճ թագուհին՝ ընկաւ վայր,
Վարդ շրթոնքէն ելաւ միայն «Ա՛հ, Զարմայր...»
Ընկաւ ինչպէս մի գեղաթոյր մանուշակ՝
Որ յարեաւ թռուի մարի բոց կըրակ: —

Զ.

Կըսեն թէ Հայերն երբ երկրորդ առաւուն
Եկան որ իրենց թագուհին առնուն,
Հոն՝ ուր փակեց աչք նաղելին Շուշան՝
Գեղեցիկ միայն մի ծաղիկ գըտան:

Թագուհւոյն ձիւնի պէս դէմքին նրման
Ունէր նա սպիտակ տերեւս աննրման,
Որոց վերայէն անոյշ մէկ բուրում՝
Թագուհւոյն մաքուր սրբախն էր ցոլում:

Իսկ տերեւներուն մարդարտի ցօղեր՝
Անշուշտ խեղճ հարսին վերջի արցունքն էր.
Որով գեղափայլ ծաղիկն այն օրէն
Ըզնովեմն անուն առաւ գըշխոյէն: —

Հայեր, երբ ճերմակ զայն ծաղիկ տեսնէք,
Չըքնաղ թագուհին ձեր իմիտ բերէք.
Ու գէթ ձեր աչքէն կաթիլ մ՝ ընդունին
Զարմայր եւ նորա թըշուառ Ամուսին:

